ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «04» ապրիլի 2023թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/09» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Ֆոտոն ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, Օլանդա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

Ֆոտոն ՍՊԸ-ն, Մեգաօֆիս ՍՊԸ-ն, Օլանդա ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

Ֆոտոն ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, Օլանդա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- **1-ին չափաբաժնի մասով Ֆոտոն ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,**
- **2-րդ, 3-րդ, 4-րդ, 8-րդ չափաբաժինների մասով Մեգաօֆիս ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,**
- **5-րդ չափաբաժնի մասով Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,**
- **6-րդ չափաբաժնի մասով Օլանդա ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:**

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ի, Օլանդա ՍՊԸ-ի, Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, Վահրամ Կարապետյան Ա/Ձ-ի հայտերը մերժել,
- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ի, Ֆոտոն ՍՊԸ-ի, Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի, Օլանդա ՍՊԸ-ի, Վահրամ Կարապետյան Ա/Ձ-ի հայտերը մերժել,
- 3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ի, Ֆոտոն ՍՊԸ-ի, Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի հայտերը մերժել,
- 4-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ի, Ֆոտոն ՍՊԸ-ի, Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի հայտերը մերժել,
- 5-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ Մերկադո ՍՊԸ-ի հայտը մերժել,
- 6-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ի, Մերկադո ՍՊԸ-ի, Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի, Ջի Էս Թի Փաուեր ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2. 1-ին չափաբաժնի մասով՝ ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ի, ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի, 2-րդ չափաբաժնի մասով՝ ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ի, ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի, 3-րդ չափաբաժնի մասով՝ ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ի, Օլանդա ՍՊԸ-ի, ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի, 4-րդ չափաբաժնի մասով՝ ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ի, Օլանդա ՍՊԸ-ի, ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի, 5-րդ չափաբաժնի մասով՝ Կարեն Գևորգյան Ա/Ձ-ի, ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի, 6-րդ չափաբաժինի մասով՝ ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի, 7-րդ չափաբաժնի մասով՝ ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի, 8-րդ չափաբաժինի մասով՝ ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան